

3-ի վրա բաժանելիություն

Տրված են երեք ոչգրոյական տարբեր թվանշաններ: Հարկավոր է գտնել միայն այդ թվանշաններից կազմված այն ամենափոքր թիվը, որը բաժանվում է 3-ի վրա առանց մնացորդի:

Մուտք

Մուտքի միակ տողում տրված են, մեկական բացակով իրարից անջատված, 3 տարբեր ոչգրոյական թվանշաններ:

Ելք

Ելքում պետք է արտածել մեկ թիվ՝ մուտքում տրված թվանշաններից կազմված 3-ի վրա բաժանվող փոքրագույն թիվը: Միևնույն թվանշանը կարելի է մի քանի անգամ օգտագործել:

Օրինակներ

Մուտք.

4 7 2

Ելք.

24

Մուտք.

7 1 4

Ելք.

111